Գերմանացի ուսումնականներ կը պարապին այդ լեզուի քննութեամբ և դասախօսութեամբ։

Հայերէնի գիտենալը շատ դիւրացրեց փոքր Ասիայի հին ազգերէն մնացեալ արձանագրութիւնների բացատրելը։ Արիական արմատի սկզբնական լեզուները, որ են. Սանսկրիտը և Զենդը ուսանելու համար հայերէն գրաբար լեզուի իմանալը բաց կանէ մեր առաջ սեպաձև արձանագրութիւնների մշակման ասպարէզը, որով հարուստ է հին Հայաստանը և որ Գերմանացի և Անգղիացի ուսումնականների պարապմանց առարկան է դարձել։ Վերոյիշեալ պատճառները աչքի առաջ ունենալով Գ. Կոսսովիչը խնդրեց արևելեան բաժնի խորհրդէն միջնորդելու, որ հին Հայերէն լեզուն ևս դաս տրուի Սանսկրիտ և Պարսից լեզուների հետ։ Այս տեղ Գ. Կոսսովիչը ասաց, որ այդ բաժնի ուսանողներէն շատերը բաղդատական լեզուագիտութեան մէջ լիովին հմուտ լինելու համար պրօֆէսսոր Պարօն Պատկանեանէն մասնաւոր դասեր կ'առնեն։

Արևելեան բաժնի խորհուրդը հաճ և հաւանութեամբ ընդունելով Պարօն Կոսսովիչի առաջարկութիւնը, իւր կողմէն ևս առաջարկեց համալսարանական ընդհանուր խորհրդին, հայերէն լեզուն Սանսկրիտ և Պարսից լեզուների հետ դասախօսութեան համար։ Համալսարանական խորհուրդը տեսնելով այդ առաջարկութեան իրաւացի լինելը ընդունեց և հաստատեց նորան, ուստի այժմ հայերէն լեզուն Սանսկրիտ և Պարսից լեզուների հետ կ'մատակարարուի ուսանողաց։

Պետերբուրգ

* *

ՑԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Հայկական Մատենագրութիւնը տասն և եօթներորդ դարուց սկսեալ, տեսնում ենք որ, մեծ հանդիսով Եւրոպականաց ուշքն ու միտքն գրաւէր և իւր հետաքրքրելի արժանաւորութեամբք զինքն քննել և քրքրել է հրաւիրէր զնոսա։

Այդ արժանաւորութիւնք գլխաւորապէս կայանում են առաջին յայնմ՝ որ Եւրոպական Հայագէտ ուսումնականք հետզհետէ Հայոց պատմութեան հետ ծանօթանալով գտնում են նորա մէջ արևմտեան Ասիոյ ազգաց, Արաբացւոց, Մոնղոլաց, Խաչակրաց Ասիոյ մէջ կատարած գործոց վերաբերութեամբ այնպիսի ծանօթութիւններ՝ զորս ոչ Արևմտեան և ոչ Արևելեան պատմագիրք են աւանդում։

Երկրորդ՝ Հայոց գրականութեան շնորհիւ լոյս տեսին մի քանի Յունական նշանաւոր գրեանք, որոց բնագիրք կորած են բոլորովին։

Երրորդ՝ որ Հայոց լեզուի, նորա բառից կազմութեան և ձևոց ծանօթութիւնըն և քննութիւնը մեծ սատար հանդիսացան լեզուագիտութեան բարգաւաճման և յառաջադիմութեան։

Այս վերոյիշեալ և այսպիսի հանգամանքներն են պատճառ, որով Հայոց լեզուի գիտութիւնը և Հայոց գրականութիւնը գրաւէր են Եւրոպականաց ուշադրութիւնը և նշանաւոր տեղ ունին նոցա գրուածոց և թարգմանութեանց մէջ։ Այն աստիճան է Հայկական մատենագրու-

թեան ծանրակշիռ արժանաւորութիւնը և այնպէս յինքն է յանկուցեր Եւրոպական ՝ այագէտ ուսումնականաց միտքն, որ օր ըստ օրէ նոցա թիւը բազմանում է և կրկնապատկւում Անգղիացւոց, Գաղղիացւոց և Գերմանացւոց մէջ, և այսօր որ և իցէ ուսումնական պատմաբան կամ լեզուագէտ պարտաւոր է քաջ գիտակ լինել ՝ այոց լեզուին և գրականութեան։

Յաւօք սրտի պիտի խոստովանիմք, որ մեր ընթերցող ՝ այ հասարակութիւնը գրեթէ բոլորովին անծանօթ է այն բազմահատոր գրուածոց հետ, յորս Եւրոպական գիտութեան լուսով մեկնուած է մեր լեզուի կանոնները և մեր պատմութեան անցքերը, բաց յայդմանէ ուսումնական հիմանց վերայ է գնահատուած և նախադասուած ՝ այոց գրականութիւնն, որ բովանդակում է իւր մէջ ՝ այական կեանքի ոգին և գաղափարը։

Մեք, որքան կ'ներէ մեզ մեր կարողութիւնը կամենալով մասամբ իւիք մեր այժմեան գրականութեան պակասութեան առաջն առնուլ, ձեռք զարկինք Ս. Մարթէն, նշանաւոր ՝ այագէտներից մէկի Մէմոար ուր ը ը Էրդեն "Յիշատակարան ՝ այաստանի" գրուածոց թարգմանութեանը, զոր յուսամք վաղ ուրեմն ի լոյս ընծայել Ս. Էջմիածնայ մեր Մայր Աթոռոյ շնորհիւ, իսկ մինչև այդ ձեռնարկեալ աշխատութեան դլուխ դալը, մեք պատուական Երարատի միջնորդութեամբ կաշխատիմք ծանօթացնել մեր ՝ այ հասարակութիւնը այն մանր յօդուածոց հետ, որոնք երբեմն երբեմն երևան են դալիս Եւրոպացւոց օրագրաց մէջ. և առ այժմ առաջարկում ենք Պ. Ռոսսէ ՝ այագէտ Գաղղիացւոյ Պետերբուրգի "Հեմարան դիտութեանց" նիստում Թովմաս Երծրունեաց պատմութեան վերաբերութեամբ կարդացած փոքրիկ տեղեկագիրը։

Ա. Ռաֆրաֆոնի.

(Ուրախ ենք Պ. Ռաֆրաֆոնեայ թարգմանութեան համար, և պարտք կրգամք նոյնպիսի օգտաւէտ հեղինակութիւնքը հաղորդել ի վայելս մերազնեայ ընթերցասիրաց։

Եւ յաջորդ թուով կը հրատարակեմք նոյն Պարոնի յիշած տեղեկագիր յօդուածը։)

ՀԱՑԵՑՈՂԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՏՈՒՈՒԹԻՒՆ
(Наглядное обученіе)

Մարդս արտաքին տպաւորութիւն ընտանում է ի ձեռն հինդ բնական զգայութեանց. հայեցմամբ, լսողութեամբ, շօշափմամբ, հոտառութեամբ, և ճաշակմամբ, որոնցից առաջի երկուսն են ուղեցուցիչք բարձր հոգևորական տպաւորութեանց։

Ազատահաս մարդն փոքր ի շատէ առողջամիտ գոլով արտաքին տպաւորութիւնք շրջակայ առարկայից արագութեամբ ընդունում է և սեփհականում է, որոնցից կաղմվում են նորա մէջ հասկացողութիւն պատճառն որ նորա ներքին հոգեկան հայեցքը և զօրութիւնն արդէն պարզ են և զօրաւոր։ Եւ կարողանում է ընդունել ոչ թէ տեսածներն աչքով լսածներ ականջով ևն. այլ մաքուր հոգևորական առարկայքը մտաց, հասկացողութեան,